

ՍԱՀԱԿ ԱՅՎԱՏՅԱՆԻ ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿԸ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՍԵՀՅԱՆԻՆ

Հրապարակելով Շեքսպիրի հայ ականավոր թարգմանիչ Հովհաննես Մասեհյանին ուղղված ներքոհիշյալ նամակները, հարկ ենք համարում երկու խոսք ասել նամակների հեղինակի մասին:

Սահակ արք. Այվատյանը (1853—1924) երիտասարդ տարիներին միարան է եղել Վարազա վանքում, ուր և 1882 թ. Մկրտիչ Խրիմյանի ձեռքով վարդապետ է օծվել: Հետագայում առաջնորդի պաշտոն է վարել Եվդոկիայում (1887—1888), Բելգիայում (1889—1890), Մարսելում (1890—1894), իսկ 1895 թ. նշանակվել է Ատրպատականի թեմի առաջնորդի տեղապահ: 1898 թ. ընտրվել է թեմի առաջնորդ, ավելի ուշ գլխավորել է Պարսկա-հնդկական թեմը և այդ պաշտոնում, կարճ ընդհատումներով, մնացել մինչև 1922 թ.: Կաթողիկոսի հանձնարարականով, ինչպես և պաշտոնի բերումով, Այվատյանը ճամբորդել է Հնդկաստան, Զինաստան, հասնելով մինչև Ճապոնիա: Ինչպես հայտնի է, թեմի առաջնորդը վարում էր հայ բնակչությանը վերաբերող գործերը՝ հոգևոր թե աշխարհիկ: Շահը նրան ճանաչում էր որպես հայ գաղութի գլխավոր ներկայացուցիչ և հայերին վերաբերող գործերում հաշվի էր նստում նրա հետ:

Այվատյանը առաջադեմ գործիչ էր և ինչպես պաշտոնավարում, այնպես էլ իր շրջագայած երկրներում եռանդուն գործունեություն է ծավալել հայ զանգվածների մեջ: Նա աչքի ընկնող ծառայություն է մատուցել կրթության և լուսավորության գործին: Նրա նախաձեռնությամբ և հորդորով բազմաթիվ դպրոցներ և գրադարան-ընթերցարաններ են հիմնվել գաղթօջախներում: Նա ակտիվ մասնակցություն է ունեցել պարսկահայության դպրոցական գործին: Նրա ջանքերով թեմի առաջնորդն իրավունք է ստանում՝ օտարերկրյա դեսպաններին հավասար օգտվելու շահի ունկընդրություններից, որ կատարվում էր ամեն տարի իսլամական գլխավոր տոնի օրերին:

Այվատյանին մտահոգել է պարսկահայ գյուղացիության թշվառ վիճակը: Ինչպես պարզվում է առաջին նամակից, Այվատյանը գյուղացիության ընդհանուր դրության մասին գանգատ է ուղարկել շահի սադրազամին՝ պարսկահայ հայտնի վաճառական Սիմոն Թումանյանի ձեռքով: Վերջինս այդ բողոքը հանձնել է Հովհաննես Մասեհյանին, որն իր հերթին, ընդարձակ բացատրություններ էլցելով, դիմումը ներկայացրել է պրեմիեր-մինիստրին: Մասեհյանը միևնույն ժամանակ, ինչպես կարդում ենք նամակում, խնդրում է առաջնորդին ավելի մանրամասնորեն տեղեկություններ հաղորդել Ատրպատականի հայ բնակչության թշվառ վիճակի մասին: Նամակները բացահայտում են Հովհաննես Մասեհյանի գործունեության մի դրվագ ևս: Պարզվում է, որ Մասեհյանը պալատում ունեցած բարձր պաշտոնը օգտագործել է թեթևացնելու համար իր հայրենակիցների տնտեսական և իրավական ծանր կացությունը:

Նամակները զգալի փաստական նյութ են պարունակում Պարսկաստանի սոցիալ-իրավական դրության մասին ընդհանրապես և հայերի մասին՝ մասնավորապես: Նամակները կարող են օգտակար լինել պարսկահայ գաղութի պատմությանը զբաղվող մասնագետներին:

Նամակների բնագրերը պահվում են Ծ. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի Հ. Առաքելյանի ֆոնդում, №№ 1747, 1748:

Վ. Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Փ Ա Ս Տ Ա Թ Ղ Թ Ե Ր

1898, 7/17 հոկտեմբեր, Դավրեժ

Գերագնիվ Հովհաննես խան Մասեհյանց:

ի Թեհրան:

Սիրելի և հարգելի բարեկամ.

Ստացել եմք հոկտեմ. 6 թվակիր երկթերթանի Ձեր պատվական նամակը ու
Բայց Ձեր երկտողը չեմ ստացել:

Շատ գոհ եմ, որ Թումանյանցների միջոցով նորին բարձրասլատվության
Սադրազամին¹ մատուցվելիք նամակը Դուք անձամբ եք ներկայացրել, հաղորդելով
միանգամայն Ն. Բ. մանրամասնությունները այն բոլոր հարստահարու-
թյունների, որոնք ի գործ են դրվում մի կարգ կաշառակեր պաշտոնյաների և
կեղեքիչ ու բռնավոր արքայազնների² կողմից Ատրպատականի խեղճ քրիստոնյա-
ների վերա:

Թեև մենք էլ մտերմորեն Վսեմ. Ամիր³ նիզամին խորին ուշադրության ենք
ներկայացրել իդանց ներկա կացության ապագա ծանր հետևանքները, և իբրև
միակ դարման առաջարկել ենք, որ աշխատի դադարեցնել հարստահարություն-
ները, հեռացնելով ասպարեզից կաշառակեր պաշտոնյաներին և չտալով ար-
տոնություն կեղեքիչ արքայազններին՝ իրենց քմահաճույքներին դերի դարձնելու
իրենց բայաթ գյուղացիներին:

Բայց տարաբախտաբար ազահությունը և կաշառքի սերը այնչափ է ցրել
վ. Ամիրի միտքը, որ չէ կարողանում, կամ ավելի ճիշտն ասած, չի ուզում ու-
սումնասիրել այս խորհրդի կարևորությունը և հետևաբար պարսից կառավա-
րության շահը:

Սովորա գյուղացիների խնդիրը կարող է ամենափառավոր մի ապացույց
համարվել իմ այս տեսության: Հեղափոխականի երևակայական գոյությունն
ու շարժումը մի գորավոր և անխորտակելի գենք է դարձել Ատրպատականի
գրեթե բոլոր պաշտոնյաների և արքայների ձեռքումը, ծծելու համար անհա-
գաբար խեղճ քրիստոնյաների, մանավանդ Սալմաստի հայերի արյունը... Ամեն
ջանք ի գործ պետք է դնել ջախջախել միանգամայն ընդմիշտ այդ շենքը, քանի
որ վստահ ենք, թե այլևս չեն կրկնվելու անցյալ տարիների անխոհեմ շարժու-
մը. բացակայությամբ այդպիսի զաղափարի հետևող գործիչների:

Սովորացիները... խնդրում են, որ ազատե իրենց կառավարությունը մա-
շաղի Թաղիի կեղեքումներից և բռնություններից, նրանք պատրաստ են վճա-
րելու մաշաղի Թաղիին այն տուրքը, զոր ղափ⁴ վճարել են թե նորին արքա-

¹ Առաջին մինիստր (պրեմիեր, պարսկ.։ Այստեղ և հետագայում ծանոթագրությունները մերե
են.—Վ. Վ.):

² Կալվածատեր (պարսկ.):

³ Նահանգապետ-կառավարիչ (պարսկ.):

⁴ Հինավուրց, հին ժամանակներից (պարսկ.):

յական բարձրության դաժնաժառանգների հրամանքին, երբ գյուղը խալիսա⁵ էր, և <թև> գյուղատերերին <նույնպես> վճարել են. մաշադի Թադին այդ հարկերը նորանոր հավելմամբ տարևներ 3500 թումանի հասցնելով, այժմ ուղում է րահուա ևս առնել, մի բան, որ և՛ ոչ մի ժամանակ, և՛ ոչ մի տիրապետության ընթացքում տրվել է, ինչպես որ մոստոֆներին⁶ քեթապեճներում⁷ հաստատված է, և որոնց հիման վրա, թե զահաժառանգները և թե Ամիրը մի քանիցս հաստատման թուղթեր են տվել. այս վերջին անգամ էլ մեր դիմումի համեմատ հոբմ⁸ տվին, որ կամ մաշադի Թադին ըստ նախկին կարգադրության վարվի սավրացիների հետ և կամ գյուղը վերադարձնե սավրացվոց և այլն. եթե բահ-բայի տուրքի վճարումը սավրացվոց պարտքը լիներ, ինչու սկզբից մինչև ցարդ ոչ մի գյուղատեր չէ պահանջել և չէ վճարված խալիսա եղած ժամանակ. ինչու չէ պահանջել միևնույն գյուղի նախորդ գյուղատեր Մյուսթեշար-Դովլեն, որից զենել է գյուղը մաշադի Թադին, կամ ինչու համար չի պահանջել նույնիսկ մաշադի Թադին առաջին 2 տարիներում, այս տարի է սկսել լուրջ կերպով բահրապահանջել. Ն. Բ. Սադրաղամի հանրածանոթ արդարադատությունից շատ հետու է թույլ տալ մաշադի Թադիի նման մի անկուշտ տգրուկի ծծել 500 տնից քաղկացած թուրք և հայ հասարակության արյունը:

Ես բաջահույս եմ, որ Ն. Բ. Սադրաղամի մոտ չեն կարող կարևորություն գտնել աչն անհիմն առարկությունը, թե գյուղացիներն իրենց գյուղը հեղափոխական կետրոն դարձնելու նպատակով է, որ բողոք են բարձր իրենց գյուղատիրոջ դեմ և ոչ թե բռնություններից աղատվելու ցանկությամբ:

Երբ այս խնդիրը ներկայացրի Վ. Ամիրին, պատասխան ստացա, թե հեռագրեցեք գյուղացիներին այստեղ գալու և իրենց խնդիրը կարգադրելու: Կոչեցինք գյուղացիներին և խնդրեցինք Վ. Ամիրից, որ մի ատյան կազմել տալով քննե խնդիրը և ըստ այնմ տա իր վճիռն: Ընդունեց Ամիրը մեր այս խնդիրը և զրով հայտնեց մեզ, թե կազմված ատյանին հրամայված է հետևյալ երեք պայմաններն առաջարկելու մաշադի Թադիին. 1. կամ այն է ղատիմի քարարի⁹ կարգով ստանա մալիյեթը¹⁰ առանց երբեք բահրայի խոսք անելու. 2. կամ թևճենսից¹¹ և թև նադտից¹² թախֆիֆ¹³ կուտա եթե ըայաթը բադի կլինի և 3. կամ թև ըստ կալվածագրի տված փողը մի փոքր հավելումով կստանա գյուղացիներից և նրանց կտա գյուղը:

Մինչդեռ ես այս որոշումներից մեկի գործադրության էի սպասում, հանկարծ ստացա Ամիրից սա որոշումը, թե դուք և թե ոչ մեկ օտարահպատակ իրավունք չունիք մեր ներքին խնդիրներուն միջամտելու: Ամիրի այս անսպասելի որոշումը խիստ հուզիչ տպավորություն գործեց ինձ վրա. ուստի և փութացի անմիջական պատասխան տալ և հայտնել իրեն այդ առարկության անտեղի և սնհիմն լինելը—նրափակյալ կստանաք մեր երկուսի գրությունների պատճեններ:

⁵ Պետական, արքունական (պարսկ.):

⁶ Ֆինանսիստ (պարսկ.):

⁷ Մատյան (պարսկ.):

⁸ Հրամանագիր (պարսկ.):

⁹ Գոյություն ունեցող (պարսկ.):

¹⁰ Դրամական տուրք (պարսկ.):

¹¹ Բնատուրք (պարսկ.):

¹² Կանխիկ (պարսկ.):

¹³ Ձեղջ (պարսկ.):

գլու: Դուք քաջ գիտեք, որ եթե Ն. Բ. Սաղրազամը չհաճի ետ առնել տալ Ամիրին յուր այս անտեղի առարկությունը, դժվար թե մենք կարողանանք որևիցե կերպով պաշտպան կանգնել մեր տառապյալ հոտին և միջնորդի դեր կատարել կառավարության և յուր հպատակ հայերի միջև: Ուստի, բացի այդ, խնդրեմ փութացնել տվեք որչափ կարելի է շուտ հանել տալ Արեգակնափալ շահի կողմից մեզ տրվելիք հրովարտակը: Համաձայն Վեհափառ Հայրիկի խնդրանաց, Կաթողիկոսի երկու գրությունները մին Մոշիր-Դովլեին և մյուսն Առ. Վեհ. շահն ուղղյալ, այս մոտ երկու ամիս է ուղարկած եմ Ձեզ ի Թեհրան, որ տաք պատկանելյացն: Բայց ինչ կըսես, ցարդ չլիտեմ, որ զոնե ապահով այդ ծրարը հասած է Ձեր ձեռք, թե ոչ: Եվ տրվելիք հրովարտակին մեջ պետք է ջանալ նրա շանակել տալու, որ Առաջնորդը միջնորդ է համենայն դեպս ի մեջ ազգին և կառավարության: Գիտեմ, Սաղրազամը դուցե առարկություններ անե, բայց եթե Ձեր գերազնվության կողմից բացատրվի Նորին բարձրության մանրամասնաբար ներկա քաղաքական հանգամանքները և Ատրպատականի Հայոց Առաջնորդարանի ի շահ Պարսից կառավարության կատարելիք կարևոր դերը, օրինակ ռուսադավան միսիայի ջանքերի անպտուղ թողնելը և այլն, պիտի համոզվի, <որ> քաղաքական այդպիսի արտոնություն Ատրպատականի Հայոց Առաջնորդարանին շնորհվիլը ավելի ևս օգտակար կլինի պարսից քաղաքականությանը:

Հունադավան կրոնի իրենց կրոնքից ավելի ուղիղ լինելու հավատամքը չէ, որ ստիպել է ասորին թողուլ իրենց կրոնը և ռուսադավան դառնալ, այլ այն համոզումն, թե ռուսադավան լինելով, կարող պիտի լինեն զերծ մնալ կառավարչական և քարգողարխանի¹⁴ մեծ և փոքր պաշտոնյաների հարստահարություններից և շահամուլ և բռնակալ արբաբների անլուր կեղեքումներից: Մյուսնիք Սալթանեի պաշտոնականությունը, ինչպես նաև Սյրմիի ռուս միսիոնարին անարգող մի ազդեցիկ թուրքի ամենախիստ պատժի ենթարկվելը ըստ պահանջման (չեմ ասել հրամանքին) ռուս հյուպատոսին, ավելի ևս խորապես հասստատել է տվել ասորիներին իրենց այդ համոզման մեջ: Եթե երբեք ուղում է Ն. Բ. Սաղրազամը, որ մենք հեռի պահենք (լսեցի, որ հայերից ևս սկսել են դիմումներ ընել ռուս քահանաներին) մեր ժողովուրդը ասորիների շավղին հետևելուց, պետք է, որ իրավունք տա պաշտպանելու օրինավորության սահմանին մեջ (և մեր առարկությունները անպայման ընդունելու են) զրկյալների իրավացի դատերը և հրամայե Ատրպատականի ամբողջ կառավարիչներին և պաշտոնյաներին, որ ընդունեն մեր իրավացի միջամտությունները և դորժողրեն մեր խնդիրները: Ապա թե ոչ անհնարին է մեզ հաջողել ետ պահելու մեր ժողովրդին ռուս <ական> պրոպագանդայից: Ի՞նչ է խեղճ սավրացի ժողովուրդ, ո՞ւմ ներկայացնե իր բողոքը և ո՞ւր գտնե արդարությունը:

Ձմեռը մոտենում է և դեռ սավրացիի կալերը ամբողջապես մնում է դաշտում... 4000 հոգու մոտ անձինք նույնչափ էլ իրենց տավարներ այսօր քաղցած և ամենաթշվառ վիճակի մեջ են գտնվում, որովհետև մաշադի Թազիի կողմից շուսյված կաշառքը կուրացրել է դատավորների աշքերը այնչափ, որ չեն կարող տեսնել թշվառությունը: Անշուշտ այնպիսի մի անխիղճ խաղ չէին կարող խաղալ նրանց զլխին դատավորները, եթե նրանք ռուսադավաններ լինեին. և կամ մեր

¹⁴ Օտար հյուպատոսությունների հետ փոխհարաբերությունները կարգավորող վարչական մարմին (պարսկ.):

ձեռք հրամանագիր ունեցած լինենք Վեհ. շահից և Ն. Բ. Սադրազամից՝ պաշտպանելու հարկ եղած պարագաներում մեր ժողովրդի զրկյալների դատերը:

(Շարունակությունը գալ փոշտին).

Սահակ Եպիսկոպոս

Քեմակալ Առաջն. հայոց Ատրպատականի

Ծրկուշաբթի, 1899 Դավրեժ
22 փետրվար

Գերաստիճան Հովհաննես խան Մասեհյանց
Քեհրան

Հարգելի բարեկամ.

Հայտնի բան է, որ այս կյանքում ամեն տեղ նեղություններ ու տառապանքներ անբաժանելի են, իսկ երբ տեղական կառավարությունը փոխանակ դրանց մասին անհրաժեշտ եղած միջոցներին ձեռնարկելու, որպեսզի թեթևացնի ժողովրդի գրությունը, ինքն իրան շարունակում է ամեն կերպով ղրկել, ճրնշել և հարստահարել ժողովրդին, այն ժամանակ մի այնպիսի վիճակ է ստեղծվում ժողովրդի համար, որին տոկալ ու համբերել այլևս անհնարին է գառնում: Այսպես, Սալմաստում էլ այդ ժողովրդի ներկա ամենատխուր գրության գլխավոր պատճառը մշտատեանլուր, անհավատալի և անտանելի զրկանքներն ու անիրավություններն են, որոնք ամեն օր անարգել և անընդհատ կատարվում են տեղական անխիղճ պաշտոնյաների ձեռամբ: Հայ ժողովուրդը արյունաքամ եղած՝ արդեն հասել է իսկապես թշվառության ամենահետին աստիճանին և գտնվում է ծայրագույն հուսահատության մեջ:

Անվերջ հարստահարողների ամենասոսկալին և ամենավարպետ փող կորգող է հանդիսանում Սարփարաստ¹⁵ Միրզա Հուսեին խան էթլայի-Դովլեն: Ութ ամիս է, որ նա պաշտոնի վրա է և շնայելով, որ ի սկզբան բավական արդար վարվել է հայ ժողովրդի հետ, բայց հետզհետե նա սկսել է իրա իսկական գույնը ցույց տալ, մանավանդ վերջերս նա արցունքներ էլ թափել է ընդհանրապես հայ ազգի թշվառ գրության մասին, միևնույն ժամանակ անխղճորեն կողոպտել է անպաշտպան հայ գյուղացիներին, որոնցից այլ և այլ պատրվակներով դուրս բերել է իբրև տուգանք, կաշառք ...և այլք՝ երեք հազար (3000) թումանի պատկառելի մի գումար:

Ահավասիկ մեզ տեղեկացրած ստացված գումարների ցուցակը.

Ա. Հին քարաղ՝ հայ ժողովրդից—Գրիգորից՝ 440 ղուան, Գասպարից (քարտաշ)՝ 210 ղուան, Ասլանիկցի Բաբայից՝ 150 ղուան, մանր տուգանքներ՝ 500 ղուան, գումար—1300 ղուան:

Բ. Մահլամ գյուղից—Անանիայից՝ 340 ղուան, ընդհանուր գյուղեն՝ 5000 ղուան, Գաբրիելից՝ 175 ղուան, երկու կնոջից՝ 460 ղուան, գումար—6975:

Գ. Հավթվան գյուղից—Վաճառ. Խոսրովից՝ 850 ղուան, Ալոշից՝ 550 ղուան, Իսկանդարից՝ 750 ղուան, հասարակությունից՝ 700 ղուան, գումար—2850 ղուան:

¹⁵ Հոգաբարձու (պարսկ.).

Դ. Սասնա գյուղից—հասարակությունից՝ 350 ղուան, Սահակ Մաննեսյանից՝ 150 ղուան, գումար—500 ղուան:

Ե. Սավրա գյուղից—հասարակությունից՝ 180 ղուան, հազար ղուան էլ պահանջում է՝ 1180 ղուան, 11805 ղուան, ընդհանուր գումար:

Իսկ եթե Սարքարաշի բոլոր ասած գումարների մանրամասն ցուցակը պատրաստել տրվի, հայտնի կլինի, թե ինչ ահագին գումար քամել է նա կարճ միջոցում Սալմաստի աղքատիկ հայ ժողովրդից:

<Ահա> սարփարաստի կեղեքելու եղանակը:

Ջենարը¹⁶ էթլայի-Դովլեն քաշված իր օթաղում բոլորովին անմատչելի էր ժողովրդին, որոնց իբր թե պաշտպան ու դատավորն է. իսկ նրա բազմաթիվ ֆարաշները շարունակ հայ գյուղերը ման գալով քիչ շատ փողի տեր ճանաչվող մարդկանց ձերբակալում բերում են Դիլիման քաղաք, փարկաշախենն¹⁷ դուգախ¹⁸ են քցում, հարցփորձ, քննություն բնավ չկա, ոչ էլ բանտարկյալները իմանում են, թե ինչ բանի համար պատասխանատու են համարվում. իսկ սարփարաստը վճիռ արձակում է վերևից՝ այսքան թուման առնել և բաց թողնել, չհամակերպողներին պահում են օրերով դուգախում, երբ վերջապես պահանջված փրկանքի գումարն վճարելով արձակում են, նրանք պետք է նաև վճարեն օրական 9 թուման խարջ ֆարաշների օգտին: Սարփարաստը այս կերպով շարունակ հայ գյուղացիներին հարստահարելիս նրանցից միևնույն ժամանակ հատուկ շնորհակալության ուղերձներ է առնել, թե՛ նրանք բոլորովին գոհ են իրանից և թե՛ նա շատ լավ կառավարում է ժողովրդին. ինչպես արել է Մահլամ և այլ գյուղերում. այս տեսակ խանի առաջ ուղերձները թերևս ղրկած լինի այդ տեղ բարձրագույն կառավարությանը:

Սարփարաստից ոչ նվազ և նրա հետ միացած հարստահարում է հայ ժողովրդին նաև Սալմաստի հեռագրատան գլխավոր պաշտոնյա Շահգադեն, նա միջամտել է շարունակ, իբրև մի երկրորդ դատավոր ամեն տեսակ իրան չվերաբերված խնդիրներում: Օրինակ, Տրշկի քահանային մի ինչ որ ամուսնական հարցի պատճառով ձերբակալել տալով 4—5 օր պահել է իրա դուգախում, չարաշար ծեծել ու հետո քառասուն (40) թուման ջառմա առել և բաց թողել է: Նույնպես ղալասարցի Հասրաթյան Պողոսից 225 ղուան առել է՝ կալվածական հարցերի մեջ միջամտություն գործելով: Շահգադեն դիլիմանցի մի խեղճ Բախտաբի¹⁹ մոտ հեռագրական մաֆթուլի²⁰ կտոր մը գտնելով և ըստ ռախտաբի ասության, իբր թե այդ 2 արշեն մաֆթուլը հաֆթվանցի խոսքով Կարապետյանից առած լինելը հիմ բռնելով, սարփարաստի հետ միացած գործի բոլոր պատասխանատվությունը ծանրացել է խոսքովի վրա, որից 600 ղուան ջառմա սռնել են և բաց թողել:

Աչքի առաջ ունենալով այս և այս տեսակի պաշտոնյաների համարձակությունը և հանդգնությունը, որոնք անարգել շարունակում են խաղալ իրանց սարքած խաղերը հայ ժողովրդին գլխին, մյուս մանր պաշտոնյաներ <ը>՝ այսինքն ֆարաշներ, զուլամներ²¹ և նոքարներ արձակ համարձակ հայ գյուղերը

¹⁶ Մեծարդո (պարսկ.):

¹⁷ Ռեզիդենցիա (պարսկ.):

¹⁸ Բանտ (պարսկ.):

¹⁹ Քանապարհային դանձահավաք (պարսկ.):

²⁰ Մետաղյա լար (պարսկ.):

²¹ Ծառա (պարսկ.):

ման գալով, բոլորովին անպատկառ և անխիղճ կերպով ծեծել, կեղեքել և շար-
շարել են իրենց ճանկ ու ճիրանը ինկնող անմեղ որսերին և այս անտանելի վի-
ճակի մասին էլ Ատրպատականի հայ ժողովրդի դժգոհությունը չափ ու սահման
չունի:

Թուրք, քուրդ զոդեր և ավազակներ անդադար կողոպտում են հայ գյուղերը.
օրինակ, գինյալ քրդերը մտնելով Հաֆթվան գյուղը, երեք տան պատը ծակել և
ամբողջովին թալանել են, և վիրավորել են երկու կնոջ. իսկ երբ դիմել են սար-
փարստին, այդ մասին նա պատասխանել է՝ «քուրդերը այդպիսի բան չեն կա-
տարել», տուգանք է պահանջել հաֆթվանցիներից, դարձյալ Մահլամ, Սառնա,
Փայաջուկ և այլ գյուղերում պատահել են վերջերս այսպիսի գողություններ և
տարել են կովեր, գոմեշներ, ոչխարներ և այլն, և այլն: Բսկ տեղական կառա-
վարությունը ոչ մի միջոց չի ձեռնարկած հանցավորներին պատժելու, նա պա-
հանջում է, որ ժողովուրդը ինքը ձերբակալե գողերին և հանձնե կառավարու-
թյանը:

Թուրքեր և հայերից՝ դարձած մահմետականներ, անդադար հինավուրց
ժառանգականության հարցեր հուզում են, հայտնի բան է, հայերից փող կոր-
զելու համար: Սարփարաստը ու յուր ընկերները խրախուսում են նրանց՝
անիրավ ու անտեղի պահանջներում: Հակառակ Երջանկահիշատակ Նասրեդդին
շահի այս մասին տված հատուկ ֆերմաններին, օրինակ, Ղուլասարում գտնված
«Շահդարման» կոչված ջրաղացի խնդիրը, որ տարին գրեթե չորս անգամ հու-
զել են, անվերջ ու անտանելի տուգանքների, խարջեր, մուտախիլների²²
ենթարկելով ջրաղացի այժմյան օրինավոր հայ տերերին: Դրա գյուղացի մի
հայ, որը 50 տարի առաջ մահմետական է եղել և այժմ կոչվում է Ռաջար Ալի,
իր ջեդիդը²³ իսլամ եղած օրից ամեն տարի ժառանգական խնդիր է բարձրաց-
րել, որպեսզի փող կորզե իր նախկին հայ ազգականներից: Վերոհիշյալ Ռաջար
Ալին այս տարի էլ գնացել է մին-Բսլամ դիլիմանցի մոլլայի տունը և նույն
գյուղացի Զաքարիա Մարգարյանից անիրավ պահանջներ է անում, մասնակ-
ցությամբ քարկուզարխանների:

Գյուղատեր թուրք աղաներն էլ իրենց կարգին թալանում են իրանց բայաթ-
ներին: Սավրայի հարցն արդեն հանրածանոթ է, որը անցյալ տարի այդքան
թունդ կերպով հուզվեց, նմանապես Փայաջուկ մեծ և նշանավոր հայ գյուղը
տիրող աղայի քմահաճույթյանց ենթարկված, այսօր ամայի և ավերակ է դար-
ձել: Այդպիսի մեծ իրողությունների առաջ բոլորովին փոքրանում են այլ նմա-
նօրինակ դեպքեր, ինչպես Ախտախանի գյուղատեր Փարվեզ խանի նորերումս
Բաղալի տղաքներից զուր տեղը 35 թուման փող առնելը և Դրիշկի գյուղատեր
Մամատ Ալի խանի Ծերունիի տղա Սարգսից բոլորովին անտեղի պատճառով
առած 30 թումանի դումարը:

Այս տեղեկագրում համառոտ կերպով նկարագրված ներկա ամենատխուր
վիճակը հիմնական և լուրջ դարմանների կկարոտի: Հայ ժողովուրդը մեծամեծ
ու անկարելի բաներ չի պահանջում, այլ միայն անդորրություն ու խաղաղու-
թյուն, անձի, պատվո և ստացվածքի ապահովություն: Հայերը շարունակ վճա-
րում են իրանցից պահանջված բոլոր տուրքերը, հարկերը, խարճերը և այլն թե
կառավարության պաշտոնյաներին, գյուղատեր աղաներին. բայց ոչ ով նրան

²² Կողմնակի եկամուտ (պարսկ.):

²³ Հավատափոխ (պարսկ.):

չի պաշտպանում, պաշտոնյաները անխիղճ կերպով հարստահարում են խեղճ հայ ժողովրդին, օրինակ, եթե մեկը հարցնում է սարփարաստից, թե ինչո՞ւ է նա այդ կերպով վարվում ժողովրդի հետ և միշտ լսվում է նույն շինծու պատասխանը, թե նա այդ անում է համաձայն բարձրագույն իշխանության հրամաններին: Իհարկե ժողովուրդը հավատ չի ընծայում այդ խոսքերին, հավատացած լինելով, որ Շահի կառավարությունը երբեք չի արձակի այդ տեսակ հրամաններ:

Հարկավոր է անհապաղ մի դարման անել հայ ժողովրդի այժմյան անտանելի վիճակը բարելավելու համար, որովհետև ներկա աղետալի և հուսահատական վիճակի շարունակության հետևանքները դառն և անդարմանելի կլինեն թե տերության և թե հայ ժողովրդի համար: Որովհետև այդ պատճառներից առաջ է գալիս.

1. Ընդհանուր աշխատության լքում և անտարբերություն. գործերը դադրած և դպրոցները փակած:

2. Հուսահատված ժողովուրդը տեսնելով, որ չկա կյանքի, ստացվածքի և պատվի ոչ մի ապահովություն, ուղում է դիմել գաղթականության:

3. Վերջապես նկատելով, որ միայն քիչ շատ կարողության տեր անձինք արտասահման գաղթելով, կարողանում են մի կերպ իրանց վիճակը բարվոքել, ուստի ժողովրդի մեծամասնությունը, զուրկ լինելով այդ միջոցներից դիմելու և իբրև վերջին միջոց այդ սոսկալի վիճակից ազատվելու համար, դիմում է կրոնափոխության, արդեն լսվում են խուլ մրմունջներ այդ դիտավորության:

Մինչև մյուս երեսի վերջը թարգմանել տալով պարսկերենի ներկայացնելու եմ մեկ օրինակ Մյուսթեշար Դովլեին և մի օրինակ էլ Վսեմ. Ամիր Նիզամին: Եթե հարմար կտեսնեք, իմացուցեք Թեհրան էլ ուղարկեմ եպարքոսին և Մոշիր-Դովլեին:

Արդ Ատրպատականի հայ ժողովրդի վիճակը բարելավելու համար ունիմ առաջարկելիք մի քանի դարմաններ, չգիտեմ մեր առաջարկելիքները որ աստիճանի կընդունվի այդ տեղի կեդրոնական իշխանությունից:

Այս անգամ Ձեզ միայն կգրեմ, որ կարդաք մեր առաջարկությունները, հարկ տեսնված դիտողություններով Ձեր կարծիքը այդ մասին բարեհաճեք փութով հայտնելու ինձ:

Եթե օգտակար կհամարվի սարփարաստության պաշտոնը ջնջվի և հայերը հանձնվեն ուղղակի Ատրպատականի ընդհանուր նահանգապետի պաշտպանությանը, իսկ եթե ոչ օգտակար է հայերի այդ սարփարաստության ջնջումը, այն ատեն պետք է հետևյալը տնօրինվի:

Ա. Դատավորներ իսլառ շմիջամտեն հայերի գործին:

Բ. Սարփարաստներ ընտրությամբ նշանակվեն:

Գ. Սարփարաստի ընտրությունը Ատրպատականի թեմակալ առաջնորդի մասնակցությամբ կատարվի:

Դ. Սարփարաստության պաշտոնին հայերից էլ քանդիտա լինեն:

Ե. Սարփարաստի տարեկան ոոճիկ և ծախս պետությունից նշանակվի. որի կեսը տեղի հայ ժողովուրդը Առաջնորդարանի միջոցով վճարե, իսկ մնացած կեսը գանձուց տրվի:

Զ. Սարփարաստի քով ժողովրդից ընտրյալ և կառավարությունից հաստատյալ մի ժողով նշանակվի 5—7 անձինքներից բաղկացյալ:

է. Սարգիսարատ<ը> առանց ժողովի ոչինչ կարգադրութիւն անելու կամ վճիռ տալու իրավունք չունենաւ:

Ը. Սարգիսարատիւաննի բարեկարգութեան համար ծախսվի օրինական առնված տուգանքները:

Այժմ այսքան բավ է. Չերայնոց և այլոց ընդ որո և Չեռ ողջունելով:

Սահակ Եսլիսկոպոս

ДВА ПИСЬМА СААКА АЙВАТЯНА ОВАНЕСУ МАСЕЯНУ

В. Г. ВАРТАНЯН

(Р е з ю м е)

Архиепископ Саак Айватьян (1853—1924) был одним из передовых деятелей в области народного образования. Он исполнял должность церковного предводителя в Евдокии, Бельгии и Марселе. В 1895 г. становится местоблюстителем епархии Атрпатакана, а позже—предводителем епархии армянских церквей Индии и Персии. Айватьян, будучи очевидцем беспримерных вымогательств, грабежа и притеснения армян со стороны персидских чиновников и помещиков, направляет письменный протест премьер-министру Персии, который доставляет по адресу Ованес Масеян. Эти документы написаны по просьбе Масеяна.

Ованес Масеян (1864—1931) окончил университет в Париже и в 1884 г. был назначен дворцовым переводчиком. Одновременно он работал преподавателем, а позже директором армянской школы в Тегеране. Масеян основал и сам редактировал первое армянское издание в Персии. Впоследствии, перейдя на дипломатическую работу, выполнял должность персидского посла в Берлине, Лондоне, Токно. На литературном поприще он известен как один из замечательных переводчиков бессмертных творений Шекспира на армянский язык.

По данным письмам устанавливается еще одна сторона деятельности Масеяна. Мы узнаем, что он старался использовать свой высокий сан для облегчения тяжелого социально-экономического положения армян в Персии. Письма представляют определенную историческую ценность. В них имеется большое количество фактических сведений, которые дают возможность расширить наши знания о социально-правовых условиях вообще и об армянской колонии в частности. Письма эти могут заинтересовать специалистов, изучающих историю Персии. Оригиналы писем хранятся в фонде А. Аракеяна Музея литературы и искусства им. Е. Чаренца, № 1747, 1748.